

ՔԱՎԱՆՈՒՄ ԱՎՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 ֆր.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
Մանուգրեան տղոց առաջին
երեսին համար 40 սանթիմ
Կ. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ Կ. երեքին
աւելի սանթիմներու համար
20 Օլո գեղը կը լայնայ :

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՈՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկելի
Խմբագրութեան հասցիին
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
Իրուքիւնիս հս յնն տրուի
Արտասահմանի ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

Արդէն «Շարժում»-ի եր-
րորդ տարեշրջանը լրացաւ, ու
տակաւին արտասահմանի մաս մը
բաժանորդներ իրենց բաժնե-
գինները չեն վրկած, մանաւանդ
ամերիկացի բաժանորդները :
Ամբողջ տարի մը ապառիկ թերթ
զրկելէ ետքը, երբ դեռ կը
խնայենք, արդէն կը կարծենք
թէ պէտք եղածէն աւելի ազ-
նուութեամբ վարուած կըլլանք
մեր բաժանորդներուն հետ, և
կը փափագինք որ, բաժանորդ-
ներն ալ շարաշար չի գործածեն
զայն :

Խմբագրութիւն

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼՎԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՇ-
ԽԱՒՈՐԵՍԻ, ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ ՎՃԱՆ-
ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ :

Տոմսակ գնել փափագողները կրնան
իրեն դիմել՝
Չար-Պորիս փողոց Վառնա
7-25

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Սահմանադրական Պուշկարիա,
ուր կը տիրէ անարգել խօսելու,
գրելու և շարժելու ազատութիւն.
մեզի ինչպէս նաեւ միւս հպա-
տակ ազգերուն շնորհած է կա-
տարեալ իրաւունք անկախօրէն
վարելու մեր ազգային ու գըզ-
ընցական գործերը : Սակայն
մենք՝ հայերս, կարողացեր ենք
այս այս առիթէն օգտուիլ կա-
տարելապէս և ժամանակին հետ
քալել : Իրողութիւնները մերկա-
պարանոց ցոյց կուտան թէ՛ այս
հարցումին բացասական պատաս-
խան մը տալու տխուր հարկին
ներքեւ պիտի գտնուինք :

Պուշկարները, թրքական ան-
տանելի լուծէն միանգամ ընդ
միշտ ազատուելէն ետք, իրենց

բոլոր ու շահարկիւնը կեդրոնա-
ցուցին կրթական յարկերու վրայ.
Վասն զի զգացին ու կը զգան թէ՛
այդ մտքի դարձնողները պիտի
արտագրեն նոր սերունդը, օժ-
տելով պուշկարիան ողջամիտ ա-
զատամիտ, յառաջդիմաւոր, և
իրենց պարաքի ու իրաւունքի
կատարելապէս գիտակից անհատ-
ներով, որոնք կը պահպանեն ազ-
գի մը յարատեւ գոյութիւնը առ-
հասարակ ամեն տեղ : Բարձրա-
գոյն և երկրորդական վարժա-
րաններու ցանցով մը պատուած
է այսօր ամբողջ Պուշկարիան :

Իսկ մենք՝ ազատութեան այս
քառորդ դարեշրջանին մէջ՝
կրկնապէս քայլեր առած ենք գրեթէ
մեր անհատական ու հաւաքական
գործերուն մէջ : Թերթիս յար-
գոյ աշխատակիցը, Շահապ,
կրթական գործին ամուրթեան
պատճառը կը վերագրէր նիւթա-
կան պակասութեան և ատոր ան-
միջական դարձանք մատնանիչ
կընէր շարժութիւնը օրուան թիւին մէջ :
Շատ ու շատ իրաւացի է յայտ-
նած գիտողութիւնը և մատուց-
չակի վէրքին վրայ դրած, վա-
սըն զի ձեռնարկութեան մը, ըլ-
լա՛յան հատական ըլլա՛յ ազգային,
յաջողութեան առաջին պայմանը
կը կազմէ նիւթականին ապահո-
վութիւնը : Սակայն այդ բաղ-
ձացեալ առաջադրութեան իրա-
կանացումին համար՝ հարկ ան-
հրաժեշտ է նախ համերաշխա-
կան ոգին գոյացնել բոլոր պուշ-
կարահայ քաղաքներու պաշտօ-
նական մարմիններու մէջ :

Համերաշխութիւնը կը յօդէ
կը միաւորէ ազգի մը անհատները
իրարու հետ սիրոյ անքակտելի
կապերով և փոխադարձ համակ-
րանքի լիով ըմբռնիւնով, միակամ
միախորհուրդ գործու-
նէութեան հիմը կը գնէ կը զե-
տեղէ անիկա ամրապէս. անոր
առջեւ բոլոր գծուարակնճիւռ ու
բարդ խնդիրները կը գտնեն ի-
րենց հեշտին լուծումը, անյազ-
թելի կարծուած դուրսբերութիւն-
ները կը հարթուին կամաց կա-
մաց կամաց :

Արտասահմանի մէջ կրթական
ամուր գրութեան զլխաւոր պատ-

ճառներէն/մէկը կը կազմէ նաեւ
համերաշխական ներգործիչ, գո-
տեպնող ոգիին պակասութիւնը.
սակայն հարկ է նախ զայն գո-
յացնել տեղւոյ մը պաշտօնական
մարմիններուն մէջ, վասն զի
արտասահմանի մէջ հողաբար-
ձութեան զատուներն նաեւ թա-
ղական խորհուրդ մը, ընտ-
րուած վերստին ժողովուրդին
քուէովը Ազգ. սահմանադրու-
թեան համաձայն Առաջին մարմ-
նին յանձնուած է վարժարանին
մատակարարութիւնը, իսկ երկ-
րորդին՝ եկեղեցիին : Ասոնք
միշտ քով քովի կը գտնուին,
մէկը միւսին լրացուցիչն է. երբ
այս երկու մարմինները համե-
րաշխարար գործեն, թէ՛ կրթա-
կան և թէ՛ եկեղեցական գոր-
ծերը կրնան բարւոք վիճակ մը
ունենալ :

Ահա՛ ընտրուած է քաղաքիս
երկուսն վարժարաններուն հողա-
բարձութիւնը, իսկ թաղական
խորհուրդը արդէն կայ :

Քաղաքի ի մեծապէս որ հա-
մերաշխութիւնը տիրէ այս երկու
պաշտօնական մարմիններուն մէջ
որպէս զի չի վասնդուին կրթա-
կան, եկեղեցական գործերը ու
վերջ ի վերջոյ անկերպարան վի-
ճակի մը չի մատնուին, ինչ որ
պատահած է և կը պատահի բո-
լոր պուշկարահայ քաղաքներուն
մէջ, ուր համերաշխական ոգին
գոյութիւն ունենալէ դադարած է :
Տեսնենք :

ՀՈՒՐ-ԱԻՕ

ՏԷԹՈՒՐՆԵԼ ՏՐ ՔՕՆՍՏԱՆԻ ՆԱՄԱԿԸ

«ՔՐՕ ԱՐՄԷՆԵԱՒԻ ՄԻՐԱԳՐԱՊԵՏԻՆ»

Ներքեցէք ձեզի պատասխա-
նել յապաղելուս համար : Պատ-
ճառը գիտէք, համակրանքի

[*] Տէթուրնէլ ար Քօնստան Լա-
հէյի միայն իրաւարար ատենին մէջ
Ֆրանսական կառավարութեան պատ-
ուիրակն է : Ներկայ նամակը այն-
քան աւելի կարեւորութիւն ունի,
որքան նկատենք թէ հեղինակը՝ իր-
բե պաշտօնական մարդ՝ ստիպուած է
չափաւոր լեզու գործածել :

պակասը չէ դէպի այնքան
վեհ ու այնքան անհրաժեշտ
ձեռնարկը՝ որուն նուիրուած էք,
դուք և ձեր բարեկամները :
Բայց ինքզինքս նեղուած ստոր-
նացած կը զգամ այս բռուն ու
անկեղծ համակրութեան և անոր
առ ձեզ մատուցած ամենադողն
ծառայութեան մէջ տիրող հա-
կասութիւնը նշմարելով :

Ի զուր կը փնտռեմ թէ ի՞նչ
կրնամ ընել ձեզի օգնելու հա-
մար : Ձեզի պէս, ես ալ տխուր ու
մերթ իսկ վհատեցուցիչ բողոք-
ներ ընելու դատապարտուած եմ :
Նոյնիսկ կը խորհիմ թէ՛ արդ-
եօք ի զուր ժամանակ վատնած
չե՞նք ըլլար այս բողոքները ուզ-
ղելով Եւրոպայի կառավարու-
թութեանց : Ձինական դէպքերը
զանոնք կը հարկագրեն օձիքին
ազատել այդ խնդիրներէն և
Սուլթանին հետ անուշ երթալ,
որպէս զի շատ դժուարութիւն-
ներով միանգամայն չի նեղուին :
Եւրոպա՛ թուրքիոյ ինչպէս Ձի-
նաստանի մէջ, իր միջամտու-
թիւնը ցոյց տուաւ անոնց ռազ-
մամթերք հայթաթելով, ինք իր
ձեռքով կրթեց ու զինեց դահիճ-
ները :

Ձինաստանի մէջ իր վրիժառու-
թիւններով վերջապէս կնճռոտեց
այն շարքերը զորս ինք գրողած
էր, ու ոչ ոք կրնայ գիտնալ թէ
ինչպէս պիտի յաջողի ասանկ
տագնապի մը մէջէն ելլել, բա-
րոյսպէս ու նիւթապէս : Բայց
անժխտելի է նաեւ թէ՛ թուրքիոյ
Սուլթանը մեծապէս ուժեղացաւ,
երես առաւ այս անյուսալի շե-
ղումէն և գաղթային կամ իշխա-
նական շովինիզմին այն պայ-
թումէն որուն ականատես կըլ-
լանք քանի մը տարիէ ի վեր :
Թրանսվալի պատերազմը, ինչ-
պէս Ձինական խնդիրը կամ Փի-
լիպեան պատերազմները, ու այսօ-
րինակ բոլոր դէպքերը Սուլթա-
նին միայն օգուտներ ընձեռեցին :
Որքան Եւրոպական պետութիւն-
ները աւելի շատ իրենց քիթը
խոթեն ազգայնական խառնուր-
դին մէջ, այնքան ազատօրէն
Սուլթանը պիտի կրնայ զանոնք
արհամարհել, պատուտել իր խոս-

տուճանքը և սկսել կայսրութեան քրիստոնեաներուն դէմ իր Ս. Բարթոլոմէոսի ժամերը: Եւրոպա Գերմանիոյ առաջնորդութեամբ՝ վերակազմեց իր քաղաքացիական իր ձեռքով վերարժարածեց իսլամական մոլեռանդութիւնը: Ինչպէս սպասել որ, այսօր անիկա դարձանել փորձէ այն ազէտները որոնց պատճառը իր սկսածութիւնը կամ մեղսակցութիւնը եղաւ:

Եւ սակայն, դուք իրաւունք ունիք անձաձորթ բողոքելով, ու ես սխալած պիտի ըլլայի վհատելով: Ձեր անդադրում յայտնութեանց շնորհիւ, այլեւս անկարելի է մեր ազգիտութեան վերադարձը մեր կողմը ու բարբարոս ձեռնպահութիւնը: անոր շնորհիւ, կարծիք մը սկսած է կազմուիլ ամբողջին մէջ ինչպատ հալածեալներու և զոհերու: Այս կարծիքը կընդհանրանայ, ու ժեր ձեռք կանցնէ ու քիչ քիչ պիտի սկսի իր ձայնը չսելի ընել, թերեւս անակնկալ դէպք մը, Սուլթանին մահը օրինակի համար, կամ չափազանց եպերելի շարք մը, պատճառ պիտի ըլլայ անոր միանուագ յառնումին, ու պէտք պիտի ըլլայ որ յորդահոս վազած անմեղներու արիւնին անզգայ մնացած կառավարութիւնները՝ զգայուն դառնան իրենց ուղղութիւնը աղաքարարութիւններուն հետեւանքով:

Այն ատեն արդարութիւն պիտի ստանաք դուք և անոնք՝ որոնք երբեք չի դուրս գրեցան պայն հազորդելու և լուսաբանելու, հակառակ կասկածելի ու շահագէտ հերքումներուն:

Արդարութիւն պիտի ստանան նմանապէս այն թշուառները որոնք այժմ ինքզինքնին ապահով կը զգան չի պատժուելուն, ու կերեւակայեն թէ Եւրոպան ոչ

եւս գոյութիւն ունի: Արդարութիւն պիտի ստանայ էնիզ փաշան, ինչպէս ուրիշներ, և մտնաւանդ այդ էնիզ փաշան: Փառամով վալին ինքզինքը անմատչելի կը կարծէ: շարաշար կը սխալի: Անիկա ուզեց նշանաւոր հանդիսանալ լուսութեան մէջ իր կազմակերպած մարդասպանութեանց նրբութիւնով, և իրայնէ ալ նշանաւոր եղաւ, ու մենք իր անունը չի պիտի մոռնանք: Ով որ սուր կը գործածէ սրով պիտի կորսուի, և դահիճի՛ գլուխը դահիճին սուրին տակ պիտի իյնայ:

Շարունակեցէք ձեր փրօքականումն, ոճրագործները յայտնեցէք ոչ թէ կառավարութեանց այլ համայն մարդկութեան մարդկութիւնը չի պիտի յապաղի յուզուելու, կառավարութիւնները անոր պիտի հնազանդին և ոճրագործները պիտի դուրս գան ոչ թէ իրենց խղճի խայթէն, այլ մօտալուտ պատժի ահուսարսափէն:

Եւրոպա Սուլթանէն պիտի հանէ ֆրանսերը այն բոլոր քառնութեանց և ստորնացումներուն զորս կրեց Չինաստանի մէջ, ու Սուլթանը, իր կարգին, զայնս պիտի հանէ պաշտօնեաներէն՝ որոնք իրենց բնաջնջման եռանդով զայն չափազանցօրէն վտանգեցին:

Յոյս դէք իրերու այս արդար վերադարձին վրայ: Իայց սպասելով՝ զիտեցէք գէթ որ անպատին մէջ չէք պրօքար: Պրանսայի արտաքին գործոց արդի նախարարը գթութեան առջեւ սրտին դռները փակած մարդ մը չէ, ես ապահով եմ ատոր, իսկ մենք բազմաթիւ ենք երեսփոխանաց ժողովին ու ծերակոյտին մէջ, որոնք առանց կուսակցական խտրութեան, չի պիտի վախնան, ձեզի պէս, իրենց զայրոյթը արտայայտելէ:

—)(—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱԽՐԻՉ, 14 Յունուար

(Շար. նախ. քիւեն և վերջ)

Ընթերցողը ակամայից, մանաւանդ չճանաչողները, պէտք է մտածեն, «մարդիկ պարզապէս առաջարկում են», շատ բարձր միթէ՞, տիկիներ, դուք այնքան պատած էք ձեր շոյողներով, որ բացարձակ իրողութիւնը մոռանում էք: Ուրիշ կերպ չի կարելի բացատրել, կամ դուք բոլորովին տեղեկութիւն չունիք, թէ ի՞նչպէս է կազմուած ձեր տեղեկագիրը, կամ թէ շոյողները կուրացած են ձեւացում իրանց: Առաջարկում ենք կարգալի շակի անցեալ տարւայ համարները, որ տեղ անշուշտ կը պատահէր Պ. Յոնանթաւթեանի և Պ. Կ. Փաշայեանի նամակները, որ բանասիրականներ են բունը, որոնք ձեր առաջարկածներին բաւարարութիւն էին տուել: Ուրեմն ի զուր տեղը թող փնջել, դա միմիայն յատուկ է շոյողներին, որոնց պարագլուխն է ձեր քարտուղարը:

Դա առաջաբանը, անցնենք միւս մասերին:

Նոյն տերեկագրում յիշում է որ «չափազանց տեղերից գիմել են ունենալ դպրոցներ» գարձեալ... դա բացարձակ «սուտ» է կը պնդեմ, կը բերեմ գրաւոր փաստեր, եթէ պահանջւի: Ոչ թէ գիմել են, այլ ձեր քարտուղարն է հող պատրաստում ապագայի համար: Ձանազան նամակներով ուզում է ձեզ, տիկիներ իր խաբել, որպէս զի ցոյց տայ իր գործունէութիւնը: Դիմումը դուք էք արել, գուցէ տեղեկութիւն էլ չունէք, և այդ էլ բաւական չէ, առանց ամաչելու

գրում էք տեղեկագրում «110 տուն ունեցող և հայ գիւղերով շրջապատուած Խոյ քաղաքը ուսումնարան չունի»:

Դա էլ բացարձակ «սուտ» է: Խոյ քաղաքը ուսումնարան ունի և արդէն 5 տարի է, ինչ գոյութիւն ունի, և ունեցել է անցեալում աչքի ընկնող ուսուցիչներ: Իսկ այժմ դպրոցը դարձել է երկօքոս:

Անցնենք հաշիւն: չեմ ուզում մտնել մանրամասնութեանց մէջ: հաշիւ կազմողը ինքը լաւ է իմանում: Մի քանի խօսք գորգագործութեան մասին: Մասնաւոր է 2997 զրան իսկ գնահատուած է 3700 զրան: Դատ տարօրինակ է 2997 զրան ծախսուող յետոյ ստանալ 3700 զրանի գորգ, այն էլ դեռ հարց է, որովհետեւ իրանք 1000 զրան պակաս են ուզում, ուրեմն ֆլաւալում են 197 զրան:

Դատ լաւ առեւտուր է: կարող են պատճառաբանել, որ սովորողները ապրանքը փչացրել են ինչպէս յիշում են «որ ներկայում 10 հոգի կան որ կարող են գորգ գործել»: հետաքրքիր է իմանալ թէ ո՞վքեր են, իսկ թէ փչացրել են չի կարող լինել, որովհետեւ գործողներին մէկ մասը եղել է պարսիկ կանայք: շատ քիչ օգնութեամբ աշակերտուհիներ: Գորգերը հաշուում են իրրեւ գրամագլուխ, խորհուրդ կուայի հաշիւ կազմողին, որ ընկերութիւնը չի որ ունի չունի, աման, սեղան եւ այլն գրանք եւս գրամագլուխ հաշիւն, մանաւանդ քարտուղարին, որով իսկապէս գրամագլուխը կաւելանայ:

Մոռացանք յիշել, որ տեղեկագրի մէջ գրում են «ընկերութիւնը առաջ է տանում իր գործը դուրս չը գալով ընկերութեան կանոնագրի գծած շաւղից»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԳՏԱԿԱՐ ԵՒ ՀԱՐԿԱՒՈՐ Է ԱՐԴԵՅԹ ԹԻԱՆՆԱՆ ՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

III

Վերջացնելով խօսքս, պիտի ասեմ, որ ինձ համար անհասկանալի են նաեւ, թէ ի՞նչ է ուզում ասել Պ. Ս. Բալաղեանը իր հետեւեալ խօսքերով:

«Պարզ է, որ «Տ. Յ.» մեզանից պահանջում է այնպիսի բաներ, որոնք նոյնիսկ գիտութեան մէջ լուծուած չեն»:

Մի՞թէ Պ. Ս. Բալաղեանը եւ ուրիշները դեռ կաւկածում են թւանշանները ու քննութիւնները բացարձակ փաստագրութեան վրայ: մի՞թէ կարող են մտածել, որ երբ եւ իցէ հէնց դրանց օգտակարութիւնը

զրականապէս հաստատուի. եթէ այդքան հաշած քայլերով ու գիտութեան ձայնին հետեւելով են առաջ գնում այդ տեսակները, շատ հետաքրքիր էր իմանալ, թէ այդ ի՞նչ գիտութիւն է, որ նրանց սիրտ է տուել թւանշանների ու քննութիւնների կողմնակից լինել, թէ կուզէ հէնց ժամանակակերպութիւն:

Պէտք է խոստովանել, որ թւանշան ու քննութիւն ո՛չ միայն պէտքակաւն չեն, այլ եւ փաստակար են: նրանք չեն կարող սերունդ կրթել: սերունդ կրթելու համար պէտք է ուսուցչական կոչում ունենալ: պէտք է սիրտ ու հաւաս լինի: պէտք է ծանօթ լինել մանկավարժութեան ու նրա օժանդակ գիտութիւններին (հոգեբանութիւն, բարոյագիտութիւն և բնական գիտութիւններ ամբողջ կերպով): պէտք է ունենալ եռանդ ու հետաքրքրութիւն, միշտ եւ անընդհատ առաջ գնալ, կանգ չառնել: չպէտք է լինել ինքնահաւան, թէ փորձուած եմ, այս եմ, այն եմ, ուրեմն ամեն բան գիտեմ: պէտք է

միշտ հետեւել փորձին եւ իր պաշտօնակից ընկերներին, նրանցից եւ առհասարակ մէկ մէկուց շատ բան կարելի է սովորել:

Կարծեմ՝ մեր դպրոցներից քչերն են (եւ գուցէ այժմ ոչ մէկը), որ աշխատեն դոնէ ամառական մի երկու անգամ փորձնական դաս լինի: մի ուսուցիչ դաս աւանդէ իր պաշտօնակիցների ներկայութեամբ (այդ տեսակ դասերը պիտի լինեն սովորական դասի շարունակութիւնը եւ ոչ թէ՛ արտակարգ մի բան): ապա քննադատեն, օգտին դրա լաւ կողմերից իսկ պակասաւոր ու սխալ կողմերի համար ընկերական խորհուրդներ ու նախազգուշութիւն տան: Ո՞րքան կարելի է գրանցից օգտուի: Լիլաւա թաղի «Հայկազեան» ու «Թամարեան» երկուսն զպրօցները 1899—1900 ուսումնական տարւանից սկսած շաբաթական մի անգամ փորձնական դասեր են ունենում: մեզանից ամեն մէկը խոստովանում է, որ փոխադարձաբար մէկ մէկուց օգտուում ենք եւ օգուտ ենք տալիս աշակերտ-աշակերտուհիներին:

Առայժմ մեր կեանքում դպրոցները երբ ընդունեն առարկայական մեթո՞ճը եւ անցնելիք նիւթի մէջ սկզբից մինչեւ վերջը կապ պահպանեն, այնուհետեւ ետքի կարիք չեն զգայ դիմելու անօգուտ քանչուսներին ու ֆենոթիստներին օգնութեանը, ինչպէս այդ անում են ներսիսեան զբոսայրոցի վարչութիւնն ու մանկավարժական ժողովը եւ ուրիշ շատ դպրոցներ:

Ժամանակ է ոչնչացնել թւանշանների ու քննութիւնների անպէտք ու փաստակար սովորութիւնը: Գտանբորդ գարի մուտքը տօնէնք ապագային այդ փաստաւոր բարեփոխութեամբ, այդ փաստաւոր յաղթանակով: Գործի գիմենք: դրանով կարգատենք հազարաւոր ու միլիոնաւոր երեսխանների կեանքը այն ուսող ու մաշող հրէշի ձանկերից՝ անպէտք թւանշաններից ու քննութիւններից: Գտանբորդ գարի սկզբում այդ գործի վերաբերմամբ քո՛ղ հայ-դպրոցները լինեն առաջին-խմբակաւ յիշափոխիչը:

Տիգրան Ռաչվանեան
4 Յունուար 1901
—)(—

Ընկերութեան անունը ցոյց է տալիս, ինչպէս և շեշտում են կանանագրի մէջ, իր բուն նպատակն է առաջ տանել իգական սեռի մասնոր զարգացումը, մինչդեռ այժմ թող է արած: Նրանք զբաղած են գաղթականներին կերակրելով, որոնց սովորեցնում են ձրիակերութեան, որը հաստատելու համար միայն մի օրինակ յառաջ բերենք: Մի քանի գաղթականներ անցագիր և ճանապարհածախ են ստացել ընկերութենից, բայց սահմանափակում ծախելով վերագանում են. ո՞վ է հետաքրքրում դրանով և ոչ ոք:

Ընկերութիւնը մի քանի գիւղերում ունի գարոցներ, որոնք գտնվում են բոլորովին տգէտ ուսուցիչ-փրկողներին ձեռքը, իսկ դրանց հասցրած փաստը աւելի աչքի է ընկնում, քան օգուտը, ինչ նպատակ ունի այդքան ուսումնարաններ ունենալ և բոլորովին անախճաճելի դրութեան մէջ, աւելի լաւ չէ՞ր պահել մէկը և կանոնաւոր ուսուցիչ ղեկավարութեամբ:

Ընկերութիւնը այս կէտին հասցնողները եղել են վարչութեան մի քանի անդամակիցները և քարտուղարը, վերջինս օգտուելով անդամակիցների թուլութիւնից առաջ է տանում իր միտումները որ նպատակ է ընկերութեան ընկնելուն:

Ուստի յարգելի տիկիներ, ընկերութիւնը բարեւաւցնելու համար անհրաժեշտ է նախ հրաժարեցնել քարտուղարին և յետոյ, եթէ ուզում էք որ ընկերութիւնը իր նպատակին հասնի, պէտք է հեռանաք և գործելու ասպարէզ տաք աւելի ինքնուրոյն և իսկական գործին ներվածների ու դրանով մի մեծ քաղաքացիական քաջութիւն արած կը լինիք:

Եւ վերեւ յիշուած մարդիկ այսօր պատրաստ են ոտնատակ անել. ամէն մի ճշմարտութիւն ուրանում են որ նրանք սպարում են ընկերութեան փշրանքներով հետեւապէս այդ մարդիկ երբ մնան այսօր կամ վաղը պատճառ կը դառնան ընկերութեան փակման Գանի շուտ է, տիկիներ, պէտք է սթափուի, դա պատիւ չէ բերում մի բարեգործական ընկերութեան:

ՆՈՐԱԹ

Յիլիլի, 6 փետրուար

I

Ընթերցարանով միայն իր գոյութիւնը յայտնող «Գրասիրաց Եղբայրութիւնը» վերջապէս կարողացաւ ամսոյս 4ին ընդհանուր ժողով կազմել, լսել իր շրջանը լրացնող վարչութեան հաշուետուութիւնը և նոր վարչական ժողով մը ընտրել եօթը հոգիէ բաղկացեալ:

Հաշուետուութենէն երեւաց որ 1900 տարւոյ մէջ բաժնեկիցներէ մտաք եղած է 271 լէվ, իսկ գրասէր «Եղբայրներու» վրայ ապտիկ մնացած է 219 լէվ, որ բարդուելով նախորդ տարիներու ապտիկին վրայ, կը կազմէ 700 լէվի պատկանելի գումարը:

Զարմանալի ժողովուրդ ենք մենք. կարծես մի քիչ ոգեւորուելու եւ գործելու համար անհրաժեշտ է որ միշտ խոշոր ճնշումներ ու զրկանքներ կրենք օտարներէն:

Ռուսաստանի մէջ բոնի փակուած գարոցներու համար օդը կը թնդացնենք մեր լաց ու կոծով, բայց ոչ մի լուրջ գործողութիւն չենք ընել Տաճկաստանի եւ Պուլկարիոյ գրգռողները իրենց ողորմելի դրութենէն բարձրացնելու համար:

Տաճկաստանի մէջ հայկական թատրոնի կայտը կը քաշենք ախ ու վախով, բայց Պուլկարիոյ նման ազատ երկրի մէջ կը քաշուին սարին մի անգամ տրուած հայ ներկայացման ուժ տալէ, թուրքի թանկ բարեհայեցողութենէն չը գրկուելու համար:

Տաճկաստանի եւ Ռուսաստանի մէջ հազար ու մի վտանգներու ենթարկուելով, գաղտնի ընթերցարաններ կը կազմակերպենք ժողովրդի մէջ նախնական ընթերցանութիւն տարածելու եւ ազնիւ զգացումներ գարթեցնելու համար. իսկ ուր որ խօսքի եւ մամուլի ազատութիւն ունինք, բնաւ չենք շարժիր կենդանութիւն տալու մեր հասարակական կեանքին:

Պուլկարիայի հայ ընթերցարանները կարծես հաստատուել են զարդի համար եւ հիւրերուն ցոյց տալու թէ «տեսէք մենք ալ ընթերցարան ունինք»:

Ռուսոսուզ խաղատուն դարձուցեր են ընթերցարանը, իսկ այստեղ մենաստան մը, որ շարքով հազար 1—2 այցելու կը դուրսի, մաւալին այն է, որ «գրասէր եղբայրները» չեն վերջովուր այսպիսի խեղճուկ ընթերցարան մը պահելով եւ խոշոր ապտիկներ արտադրելով տարուէ տարի. արդեօք անբարեխղճութիւն չէ՞ տարի մը օգտուել ընթերցարանի գրքերէն եւ չի վճարել բաժնեկիցները:

Երբ խնդիրը անձնական հաճոյքներու կը վերաբերի մեր ամենաազգաստը անգամ համարձակ ու առատաձեռն է ծախսելու մէջ, իսկ երբ որ եւ է հանրային գործի նպատակով բաժին վճարելու հարկին մէջ կը գտնուինք, սքանչելի անտեսագէտներ կը դառնանք եւ ցոյց կուտանք որ անկարող ենք մեր օրապահիկէն բան մը աւելցնելու: Ու այս ամենին յետոյ դեռ կը սիրենք պարծենալ թէ մենք գիտակցող ու գաղափարական մարդիկ ենք:

II

Փետրուար 6ին «Վէսէյօ» խումբը որոշ վարձատրութեամբ ի նպատակ տեղական ազգային վարժարաններու, Լիւքսէնպուրկ թատրոնին մէջ ներկայացուց «Կառապանին աղջիկը» տրամբ եւ «Ապուշ ծառան» զաւեչտը, րոտֆելդ լեզուով:

«Կառապանին աղջիկը» Ֆրանսական մի թիւում տրամ էր, որ ինչքան ալ լաւ խաղացուի, չէ կարող խոր տպւեւորութիւն թողնել հանդիսականներու վրայ: Կատակերգութեան ժամանակ թէեւ Պ. Պ. Պէնլեան եւ

Սրամեան իրենց ընդունակութիւններով շատ խնդրացուցին ժողովուրդը, բայց չի նայած վերջի բարոյական կարկտանին, խաղը իր սեղմ մանրամասնութիւններով բոլորովին անյարմար էր բեմ հանելու: Այդպիսի «ապուշ-ծառու» խաղեր միայն հաճելի են թուրքերուն եւ թրքաճաշակներուն. միթէ չէ՞ր կարելի աւելի բարոյալից ու միանգամայն ծիծաղաշարժ մի կատակերգութիւն ներկայացնել:

Սաստիկ վատ տպւեւորութիւն թողուց նաեւ այն փաստը, որ թատրոնը կազմակերպողները բնաւ չէին մտածել, թէ ինչպատ հայ լեզուն տարածող հաստատութեան տրուած ներկայացում մը, ամօթ էր օճաթ լեզուով ներկայացնել:

Մեզ չեն կարող առարկել թէ դեռասանները անկարող էին հայ լեզուով յաջող խաղալ կամ թէ արդեւքի տեսակէտով կարեւոր էր թրքերէն տալ, թրքախօսներուն մտաչելի դարձնելու համար. որովհետեւ նոյն «Վէսէյօ» խումբը վարչապետին սօսին Արշակ Բ-ը պիտի ներկայացնէ հայերէն, թէ փորձը ցոյց տուած էր որ «Անիի առուներն» տեղ չը լինելու պատճառաւ 40—50 հոգի ետ դարձեր էին:

Իսկ ես կը պնդեմ թէ, եթէ նոյն իսկ րոտֆելդը անհամեմատ մեծ հատոյթ մը առաջ բերէր, դարձեալ հայ պաշտօնական մարմին մը անպատուաբեր էր լքել մարտնի անուշ լեզուն (՝) եւ հնչեցնել մեր ականջներուն ռեսերիմ թշնամի բարբառը:

Այսպիսի խնդիրներու մէջ ո՞չ մի ազգ, ո՞չ մի ցեղ չէր թոյլ տար իրեն, այսքան մոռանալ ազգային արժանապատուութիւնը:

Բայց կա՞յ արդեօք մեր արիւնին մէջ ճեղքային արժանապատուութիւն: Թուրքերը մեզ թախնեցին, կոտորեցին, հեղհեցին եւ պղծեցին մեր ընտանեկան պատիւը ու նոյն վայրագութեամբ կը շարունակեն պակաս մնացածը լրացուել, իսկ մենք ապուշ ստրկամտութեամբ դեռ պարտք կը համարինք քծնել Սուլթանի ներկայացուցիչներու առաջ կամ ո եւ է շահասիրական դիտումով չենք վերջովուր մեր ընտանեկան պարահանդէսներու մէջ առօք փառօք մտաք տալ թուրք սրիկաներու եւ ինքնայօժար մեզ կիները յանձնել անոնց:

Մեր եկեղեցիները այրեցին, զըպրոցները մոխիր դարձուցին, 40 հազար հայ թրքացուցին եւ եթէ կարելիութիւն ունենային լեզուներն ալ պիտի կտրէին որ ա՛լ հայերէն չի խօսին, իսկ մենք ազատ երկրի մէջ չենք վարանիր թրքերէն խօսելու եւ թրքերէն ներկայացումներ կարգադրելու:

Պարոններ, ամէն բանէ տաջ եւ ամէն դիտումէ վեր ազգային արժանապատուութիւն ունեցէք. զըպրեի, ծաղրելի եւ զժբաղղ է այն ազգը, որ օտարներու հալածանքին ու քամահարանքին տակ զեռ գուրկ կը մնայ այդ վեհ զգացումէն:

Հանդիսական

—)(—

[՝] Ուրախ ենք յարգելի յօգուածագրին յայտնած այս գաղափարին համար: Հայ լեզուի գործածութիւնը միշտ անհրաժեշտ պէտք մը դառնալու է մեզի:

Ծ. Պ.

Ռուս կառավարութիւնը ոչ միայն նոր հոգեր տուող չէ հայերուն, այլ եթէ օրէնքի բերէ, տուածներն ալ ետ առնելու է: Հետեւեալ դէպքը որոշապէս ցոյց տուաւ այդ քաղաքականութիւնը:

1880 թուին Չարչամպայէն Սօխում կուզան 17 տուն հայեր. իրենց բնակութեան տեղ կը տրուի կառավարութեան կողմէ Մծարայ գիւղի սահմանակից անտառներ, ուր կը հաստատեն վերի-Անսիսա գիւղը: Քանի մը տարի յետոյ գիւղացիները ուսասնական լինելու խնդրագիր կուտան. կընդունուի խնդիրը, Լօվոյէ Աֆօնի յայտնի վանքի ուսմիարաններէն մին կերպուցնուէ գիւղացիները եւ սաճկական անցագիրները կառնուին անոնցմէ: Կանցնի 4—5 տարի եւ օր մը Անսիսա գիւղը կայցելէ կտաւուտի նաչալիկը, ճանով մը կը հաղորդէ անոնց ուսասնական ընդունուելը, խրատներ կուտայ աներու շինութեան եւ այլն մասին, եւ գիւղացիներու օրհնէնքը առնելով կերթայ: Բայց 1896 թիւին վերջերը ուսասնականաւոր մը կիմացնէ որ պատրաստուին բնակութեան ուրիշ տեղ գտնելու, այդ հոգիքը արքունական լինելով, իրենք իբրեւ օտարահպատակ իրաւունք չունին մշակելու: Բանը այն էր որ 10—15 տուն ուսս գաղթականներ եկած եւ շատ հաւանած էին Անսիսայի գիւղին: Գիւղացիները հայկական նշանաւոր անհոգութեամբ սկզբէն միջոցներ ձեռք չառին եւ իրենց առօրեայ գործերը շարունակեցին: Վեց ամիս չանցած 1897 փետրուարին կտաւուտի այն նաչալիկը, որ անոնց ուսասնականութիւնը յայտնած էր, հրաման կը զրկէր չուտով դատարկել գիւղը: Գիւղացիները կը պատասխանեն թէ իրենք ուսասնականներ են եւ իրաւունք ունին մնալու: Նաչալիկը լսել անգամ չուզեր հպատակութեան խօսքը եւ կը պահանջէ թրքական անցագրերը եւ հակառակ պարագային կսպառնայ իբրեւ անցագիր չունեցող փաստականներ Տաճկաստան քարտէր. գիւղացիները կը յայտարարեն թէ անցագրերը վաղուց յանձնուած են կառավարութեան եւ իրենք աւելի լաւ կը համարեն Անսիսայի մէջ կոտորուել քան ուրիշ տեղ երթալ, այն ժամանակ նաչալիկը գիտաւորներէն երկուսը ձերբակալելով կը զրկէ Սօխում, որպէս զի Պաթումի վրայով քարտուր Սամսոն: Անսիսայիները Սօխում կը թափին. շարլաթանի մը 402 լուպի կուտան որ երթայ Պետերբուրգ (՝) իրենց իրաւունքը պաշտպանէ. ան ալ Ռուստովի մէջ 400 լուպիին հանդստեանը կը կարգայ եւ ետ կուտայ: Միւս կողմէ մի քանի ազգեցիկ հայեր կառավարական արխիւները կը պրպանեն ու կը հանեն գիւղացիներու թրքական անցագրերը, երգում տալերինն ու այդպիսով կը յաջողին ազատիլ բանտարկուածները. հետագիւր մըն ալ կուզեն Բուլխարիի նահանգապետին: Բանտարկուածները դեռ չէին վերադարձած գիւղ, կտաւուտի նաչալիկը երրորդ մըն ալ կը ձերբակալէ եւ շիտակ Պաթում կը զրկէ: Գիւղացիները երրորդ երկար հե-

ուսարժ մը կը բողոքեն այդ անիրաւ ձերբակալութեան դէմ եւ կը յայտնեն իրենց պաշտօնապէս հաստատուած իրաւունքները: Ձերբակալուածը Պաթում փոխադրած էին Տաճկաստան գացող նաւը, երբ հազիւ հասաւ կառավարչական հրաման ազատ արձակելու զայն, բայց միւս կողմէ Սօխում ստացուեցաւ հետեւեալ կարուկ հետագիրը.

«Ռուսահայտակներ չէք, շուտով մարտնչեք զիւզէն. Բոթալիսի նահանգական օգնական».

Այդքէն Անսիւսիցիները արիւն արցունքով հետազան իրենց 17 տարուան գիւղէն, պատրաստ բնակարաններն ու այգիները իրրեւ հողագին ձգելով յաջորդող սուսներուն:

Անսիւսիցիները պաշտօնապէս ուսանապատակներ էին. բայց որովհետեւ անհոգութեամբ ուսական անցագրերը ձեռք բերած չէին, կառավարութիւնը օգտուեցաւ սորթէն եւ արտաքսեց:

Բացի այն, որ պաշտօնապէս արգիլուած է Ռուսաստանի հողերը, նոյնպէս դադարեց հրահանգներ արուած են նաչալիկներուն որ ծովեզերքները օտարազգի ուսանապատակ գիւղացիներու հողեր գնելուն արգելք լինին անուղղակի միջոցներով եւ բնաւ հոգ չը տանին օտարազգիներու մէջ պատահած շարագործութիւններուն ու գողութիւններուն: Արխագներն ու Մինքրէլները համարուաւոր գողեր են ընտանի անասուններու: Մծարացիները դրացի են Արխագներու, որոնք տարեկան 4-5000 ռուպլի արծողութեամբ անասուն կը գողնային անոնցմէ եւ Անսիւսիցիներէ, քանի՜ քանի անգամ կտուրաւորութեան դիմեցին, ոչ մի հոգածութիւն չը տեսան: Նաչալիկներէն մէկը հասկցուց որ իրենց հրաման կայ միայն ոտու գիւղացիներու հոգ տանիլ եւ ամենամօտ Արխագ գիւղէն բռնի առնել ուսէն գողցուած կենդանիին արժէքը, օտարազգիներուն չեն խառնուիր: Հայերը հասկցան որ ակն ընդ ականի ժամանակն է. անգամ մը Արխագները գիշերով եկած էին Մծարայէն զոյգ մը եղ փախցունելու, հայերը վրայ թափեցան եւ սպաննեցին անոնցմէ մէկը. կառավարութիւնը ձայն չի հանեց: Արխագները վրէժխնդրութեան համար խարդախութեամբ սպաննեցին տարեց հայ մը: Մծարացիները Մահմէտի դրախտը զրկեցին երկրորդ Արխագ մըն ալ, եւ ա՛լ այս վերջինները չի համարձակեցան հայ գիւղերուն մօտենալ: Ընկալաւայի կողմերն ալ քանի մը Մինքրէլներ այդ փառքին արժանացան:

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հ. Յ. Ինչնակցութեան հիմնարկութեան տասնամեակը լրացած ըլլալուն առթիւ, կը տեղեկանանք թէ «Իրօջակոյի յունվարի թիւը ամբողջովին անոր նուիրուած պիտի ըլլայ»:

— Հ. Յ. Ինչնակցութեան Առաքապատկանի կեդր. կոմիտէն նոր տարուան առթիւ յայտարարութեամբ մը տեղական ժողովուրդը կը հրաւիրէ նոր գործունէութեան, նոր կռիւի: Յայտարարու-

թիւնը կը պարզէ յեղափոխութեան անցեալ գործունէութեան նշանակութիւնը և կը զգուշացնէ հասարակութիւնը կարգ մը բազմախնդիրներէ, որոնք կեղծ հանգանակութիւններու կը ձեռնարկեն մերթ ընդ մերթ կոմիտէին անունով:

— Անցեալ կիրակի տեղոյս ազգային վարժարանի հոգաբարձութեան ընտրութիւնը կատարուելով, հետեւեալ հինգ անձերը մեծամասնութիւն շահած են:

- Տեարք Փրիլպոս Հայաճեան
" Միհրան Զգօնեան
" Յարութիւն Հաճօլեան
" Յարութիւն Էնկիպարեան
" Գրիգոր Թօսպըլքեան

— Որբախնամի Տիկ. Ճիւղի Գոթ. Ժողովը կուգայ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել Ազն. Տիկիւնի մը որ ուրախութեան մը առթիւ 10 ֆրանք նուիրեր է նոյն ընկերութեան: Որբախնամը փափաք կը յայտնէ որ ուրիշ Ազն. տիկիւններ հետ հետեւին սոյն օրինակին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Արխագները ընդհարում մը տեղի ունեցեր է պուլկար հրոսախմբի մը և թուրք զօրքերու միջեւ, կէզէլիի մօտ, զիւզի մը մէջ, Վեց պուլկարներ սպաննուիւր և երեք հոգի ալ ձերբակալուեր են, իսկ միւսները փախեր են: Թուրքերէն չորս զօրք ու երեք օստիկան սպաննուեր են:

— Դեսպանները անցեալ շաբթու հաւաքուեր են խորհուրդ համար Բ. Դրան Միջազգային առողջապահական խորհուրդին մատուցած ծանուցագրին տրուելիք պատասխանին վրայ:

— Անգլ. դեսպան Օ'Բոնօր Բ. Դուռ գիմեր է մակեդոնական խնդրին համար, խնդրելով որ, Բ. Դուռը խիստ միջոցներով աշխատի յեղ. կոմիտէներու գործունէութիւնը կասեցնել, միւս կողմէ գիտել տալով թէ Դուռը պէտք է արգիլէ զօրքերուն անմնջ մարդոց նկատմամբ անվայել ընթացք մը բռնելէ: Փրնս. դեսպանատան վարիչն ալ նոյնիմաստ դիմում մը ըրեր է:

— Դիւանագիտական շրջանակներու մէջ, մասնաւորապէս Աւստրիական, լուրջ մտատանջութիւն մը կը տիրէ Մակեդոնիոյ կացութեան և պուլկար կոմիտէներու շարժումներուն մասին, որոնք նպատաւոր հող կը գտնեն տեղական իշխանութեանց կողմէ ամէն պաշտպանութենէ և արդարութենէ զրկուած ժողովուրդին մէջ: Այս մտահոգու-

թիւնը աւելի սուրցած է Ալպանացիներու բռնած դիրքով, որոնք կը հակառակին իրենց առանձնաշնորհումները նուազեցնող ամէն բարենորոգումի:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Պալատը վերջապէս համաձայներ է դեսպաններուն որոշած պատժին միայն խնդրեր է որ Շասոյու Շաս և Եանկ Իլիէնի պատիժը խեղդում ըլլայ փոխանակ զլիւստման: Դեսպանները ընդունել են, որով այդ խնդիրը գէթ առ այժմ լուծուած է և նոր արշաւանքի մը պատրուակը այլևս գոյութիւն չունի: Կը կարծուի թէ նորանոր դժուարութիւններ պիտի ծագին նաեւ սուգանքի հատուցման խնդրին մէջ, որուն ամբողջ դումարը մօտ 400 միլիոն սկի տօլար պիտի ըլլայ:

— Զինաստանի գործերուն ծանօթ մարդիկ կը հաստատեն թէ պատիժներու այսկերպ որոշումը յալթանակ մըն է Զինաստանի համար, որովհետեւ անձնապանութիւնը այդ երկրին մէջ անուանարկիչ պատիժ մը նկատուած չէ, և ապահովաբար բոլոր դատապարտեալները ինքզինքնին պիտի սպաննեն: Ասոնցմէ երեքը միայն ճարտարագիտութեամբ ձեռք ինկած են և մէկը արքունիքին ձեռքը:

— Պոքսէր պետերէն մին արգէն զլիստուեր է: Թուան իշխանը հոկտեմբերին պիտի գլխատուի:

Լուր կայ թէ Թուան և Չուանկ իշխանները ծպտեալ վիճակի մէջ ձերբակալուեր են Սիանկ Թուի մօտ:

— Անգլիացիք Բէքիէն—Թիէն—ձինի երկաթուղոյն գծին տիրացեր են:

— Շանկհայէն «Ժուռնալի կը հաղորդեն թէ Անգլիա և Իերմանիա համաձայնած են վաճառականական շրջանակները որոշելու գործին մէջ: Եան-Չէնի հովիտը իրենց պիտի մնայ, Մանչուրիան պիտի ձգուի Ռուսիոյ, Իտալիոյ՝ Սան Մունին, Ճարոնին՝ Ամուան, Փրանսայի՝ Եունան: Կըսուի թէ Փրանսա գոհ չէ մնացած իրեն յատկացուած բաժինէն:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Տրվէթի յետապնդումը ամբողջովին ի դերու ելած է, Հիմակ ալ Անգլիացիք որոշեր են Պօթայի նահանջը արգիլելու ջանքեր ընել: Անգլիացիք այլևս իրենց յոյսը դրած են Պօթերուն ռազմավարութիւն սպանուելուն վրայ: Պօթերը ծովի հետ

իրենց յարաբերութեանց ընդհատումէն ի վեր, արդարեւ մեծ նեղութիւններ կը կրեն ռազմավարութեամբ հայթայթելու համար: Կըսեն թէ Տրվէթ Օրանժ անցնելու ստեն 10,000 փամիուշտ կորսնցուցած է:

— Մէթուէնի չորախումբը բուռն ընդհարում մը ունեցեր է 1400 պօթերներու հետ, որոնք իրենց բռնած դիրքին ամրութեամբ կարողացեր են բուռն կերպով դիմադրել: 8 անգլիացի սպայ, 13 զօրք սպաննուեր և 15 սպայ, 29 զօրք վիրաւորուեր են: Պօթերուն կորուստը 18 հոգի է:

— Աւստրալիոյ կառավարութիւնը պաշտօնապէս մերժեր է հարաւային Աֆրիկէ զօրք զրկել Պօթերու դէմ պատերազմելու համար:

Կ Ր Է Տ Է

Կրէտէի չորս պաշտպան պետութիւնները այժմ կը խորհին միջազգային զօրքերու տեղ կրէտէի մէջ պահել յունական զօրքեր, որոնք նոյն պաշտօնը պիտի ունենան ինչ որ ունէին միջազգային զօրքերը: Զի գլխացուիր թէ ինչ պիտի ըլլայ բանակցութեանց արդիւնքը, որովհետեւ Եւրոպական դահլիճները դեռ առաջին քայլերուն մէջ կը գտնուին:

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

Sof. V. Barmannskij և Ե. Barmannskij «Die sozial-ökonomisch Türcei» Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի եւ ընդհանրապէս թուրքի մասին: Գիրք 2 մարկ ճանապարհածախով դիմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, №W. 7

ԱՌՈՂՉԱՊԱՀՆԻՍ ՄԻՋՈՑ ՄԼՆ ԱԼ

Եթէ կուզէք կործարել եւ շնչառութեան զանազան տեսակ հիւանդութիւններէ զերծ մնալ, ծխեցէք Ազգ. Հիւանդանոցի Ս. Փրկչի սիկարի թուղթը: Պատրաստուած է այս անգամ Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութեան յատուկ խնամքով, ֆրանսական առաջին տեսակ թուղթէ: Ինչպէս չորս տարիէ ի վեր Պուլկարիոյ միակ մասնաճիւղն եղած էմ, եւ ինչպէս Շարժումի ազնիւ ընթերցողաց ծանօթ է. մէկէ աւելի անգամներ յայտարարած էմ, անգամ մը եւս կուգամ յարգոյ յաճախորդներու յայտարարել թէ, ինորոյ գաղղիական, Կ. Պոլսոյ եւ տեղական ընտիր տեսակ թուղթերու հետ նոյնպէս Ազգ. Հիւանդանոցի առաջին տեսակ թուղթէն մեծաքանակ բերել տուած էմ: Յանձնարարութիւնք փութով եւ ճշգիւ կը կատարուին, միայն գիշերը կանխիկ, Դիմել թիւ 51, Ուղու 2 արշի Փ. Պոլս 5-5 ՏԻԳՐԱՆ Յ. ՏՈՒՄԱՆԱՆ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ МХГЖРДИЧЪ ВАРТАНЪ Печ. «Взаимность» — Варна.